լրտեսութեան, և տուաք իշխանութիւն քեզ, որ ծախիւքն տանէն հայոց առնես սպասաւորս երկոտասան 'ի ժամանակս խաղաղութեան, և երեսուն և վեց 'ի ժամանակս պատերազմի այրս երկայնամիտ, շրջեցուցանելով նոցայ 'ի յերեսս երկրին հայաստանեաց, և 'ի տարբ յաշխարհ երկիրն թշնամեաց և դրացեաց հայոց լռելեան, և ամենայն զգուշութեամբ հանելով ամենայն լուր զոր ինչ և իցէ ամենայն շաբաթու մանրամասնաբար շարելով 'ի վերայ երիս թղթու, մինն յանձնեսցես իշխան քաղաքի նախիջևանու, երկուքն ընծայեսցես մինն 'ի նմանէ 'ի դրունս տանն հայոց, և միւսն 'ի ծածուկ խորհրդարանն նախարարին հայոց, և 'ի կարգադրութենէ տանէն հայոց, փակեալ լիցի ձեռ և բերանն քոյ, որ ամենայն զոր ինչ լուր լռելեան և գաղտնի մի խօսել և գրել յումեք բայց 'ի երիս դրունս որպէս հրամայեցաք քեզ 'ի վեր, և ջանալով հոգասցես հաւատարմաբար տանն հայոց, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ և այլն։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.	Ս. Տ.	○
	Վ. Տ.	○
	Գ. Տ.	○
Միքայէլ իշխան.	○	
Մանուէլ Գծագիր.	○	